ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցիչ

Ա. Մանուչարյանի (լիազորագիր, տրված՝ 28.04.2020թ.),

«Էնըլայզդ» ՍՊԸ-ի տնօրեն

Կ. Դավթյանի (պետական գրանցման համար՝ 273.110.1088369),

«Էնըլայզդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Գ. Սարգսյանի (լիազորագիր, տրված՝ 28.04.2020թ.)

քննելով ՀՀ Ազգային ժողովի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կադրերի հավաքագրման և տաղանդների կառավարման համակարգի ներդնման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Էնըլայզդ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2020թ. ներկայացված (21.04.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/39 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Էնըլայզդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էնըլայզդ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 20.04.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կադրերի հավաքագրման և տաղանդների կառավարման համակարգի ներդնման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցում:

Ընթացակարգը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն, այն է՝ «Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել»:

Ընկերությունը հայտնել է, որ սույն թվականի ապրիլի 14-ին՝ ժամը 10:30-ին, մասնակիցները ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որի արդյունքում ապրիլի 15-ի թիվ 2 արձանագրությամբ և Պայմանագիր կնքելու մասին հայտարարությամբ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի հաղթող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի մասնակիցներ՝ «Էնըլայզդ», «Վեբէքս Թեքնոլոջիս», «Մենեջմենթ Միքս» ՍՊ ընկերությունների և ԱՁ Ջանիկ Սևոյանի ներկայացրած հայտերը մերժվել են՝ հիմք ընդունվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերն ու հիմնավորումները.

Սույն թվականի ապրիլի 14-ին ժամը 10:30-ին կազմակերպված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ընթացքում «Էնըլայզդ» ՍՊԸ-ն առաջարկել է 1 միլիոն ՀՀ դրամ առաջարկվող համակարգի մշակման համար, որը քննարկումների արդյունքում դարձավ նվազագույն գինը, սակայն գնանշման հարցման հանձնաժողովի

արձանագրության համաձայն՝ առաջարկը մերժվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն, այն է՝ «Առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով»:

Ընկերությունը նշել է, որ ընդունելի չէ վերը նշված հիմնավորումը, քանի որ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ կետով նշվում է հայտում ներկայացվող գնի մասին՝ սահմանելով «Առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով»: Իսկ բանակցությունների ընթացքում ինքնարժեքի հնարավոր նվազեցումների մասին նշում չկա:

Գնման առարկա հանդիսացող համակարգի ինքնարժեքը Ընկերության կողմից իջեցվել է բանակցության ընթացքում, իսկ Կարգի որևէ կետով չի սահմանափակվում բանակցությունների ընթացքում ինքնարժեքի իջեցումը (Կարգի 40-րդ կետ՝ հայտերի բացման և գնահատման նիստ):

Ընկերությունը հայտնել է, որ «Էնըլայզդ» ՍՊԸ-ն բանակցություններին ներկայացել էր կադրերի հավաքագրման և տաղանդների կառավարման համակարգ 80%-ով պատրաստ տարբերակով (տոկոսային համապատասխանությունը ներկայացվում է տեխնիկական առաջադրանքի հետ համեմատության հիման վրա), որով հիմնավորվում է տվյալ պահին ինքնարժեքը նվազեցնելու փաստը: Համակարգը բանակցությունների ընթացքում ներկայացվել է հանձնաժողովին և Ընթացակարգի մյուս մասնակիցներին:

Բանակցությունների ընթացքում հանձնաժողովի քարտուղարը, հարցմանն ի պատասխան տեղեկացրել է, որ մասնակիցները կարող են գները նվազեցնել նաև ինքնարժեքից, ինչի արդյունքում բոլոր մասնակիցները (բացառությամբ հաղթողի) առաջարկվող գները նվազեցրել են ինքնարժեքից, որը հայտերի գնահատման արդյունքում դարձել է հայտերը մերժելու հիմք և մասնակիցներին հաջորդաբար զբաղեցրած տեղեր չեն հատկացվել:

Ընկերությունը հայտնել է, որ հայտերի բացման մասին արձանագրությունը (Tender opening) «Էնըլայզդ» ՍՊԸ-ի (info@analysed.am) էլեկտրոնային փոստին չի ուղարկվել: Այնինչ, ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար՝ կադրերի հավաքագրման և տաղանդների կառավարման համակարգի ներդնման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման օրը հաստատումից հետո բեռնում է հայտերի բացման մասին արձանագրությունը, որը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

Մասնակիցները գնային առաջարկները ներկայացրել էին ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, իսկ քարտուղարի կողմից բանակցությունների համար ներկայացված թերթիկում վերոնշյալ բաղադրիչները՝ բացառությամբ ԱԱՀ-ի, բացակայում էին, ինչի հետևանքով անհասկանալի է մասնակիցների կողմից իջեցված գները ինքնարժեքից են պակասեցվել, թե՝ շահույթից:

Գնահատման արդյունքների մասին արձանագրությունը «Էնըլայզդ» ՍՊԸ-ի (info@analysed.am) էլեկտրոնային փոստին չի ուղարկվել: Այնինչ, հրավերի 8-րդ կետի 8.23 ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ համակարգի միջոցով Ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

Ընկերությունը ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է.

1.չեղյալ հայտարարել ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կադրերի հավաքագրման և տաղանդների կառավարման համակարգի ներդնման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում սույն թվականի ապրիլի 15-ին տեղեկագրում հրապարակված թիվ 2 արձանագրությունը:

2.չեղյալ հայտարարել ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կադրերի հավաքագրման և տաղանդների կառավարման համակարգի ներդնման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԱԺ

ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում սույն թվականի ապրիլի 15-ին տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.04.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. ՀՀ Ազգային ժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումն և հիմնավորումները.

ՀՀ Ազգային ժողովը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.04.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի մասնակիցները Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որի արդյունքում ապրիլի 15-ի թիվ 2 արձանագրությամբ և Պայմանագիր կնքելու մասին հայտարարությամբ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի հաղթող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը, Ընթացակարգի մասնակիցների ներկայացրած հայտերը մերժել է:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից կադրերի հավաքագրման և տաղանդների կառավարման համակարգի ներդնման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***01.04.2020թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էնըլայզդ» ՍՊԸ-ի 20.04.2020թ. ներկայացված բողոքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պարտադիր հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.04.2020թ. գրությամբ դիմել է ՀՀ Ազգային ժողովին՝ խնդրելով տրամադրել ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված

ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ Ազգային ժողովը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը չի հրապարակվել gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումների համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը Օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, իսկ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է, մինչդեռ արձանագրում եմ, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպվել է ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ առանց իրավական հիմքի, այն է՝ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլան: Արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստիև գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող՝ Ընկերության հայտի մերժման իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Էնըլայզդ» ՍՊԸ-ի կողմից 20.04.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

2.Պարտավորեցնել ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/13 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**